ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2014 թվականի մարտի 24-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3

Պատվիրատուն՝ Արամուսի գյուղապետարանը, որը գտնվում է ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս գյուղի Կենտրոնական փողոցի թիվ 17 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ***աշխատանքների ձեռք բերման*** գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ***Արամուս համայնքի Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասարահների ձեռք բերումը:***

<<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող է ներկայացնել ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,որոնք ներառված են գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ,աշխատանքային ռեսուրսներ:

Հրավերը փաստաթղթային ձևով ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին հայտարարության հրապարակման օրվանից հաշված 9-րդ օրը ժամը 09^{00}-ից մինչև ժամը 16^{00}-ն:

Հրավերը փաստաթղթային տեսքով տրամադրելու համար պահանջվում է վճար՝ ***2000 ՀՀ դրամ*** գումարի չափով, որը պետք է փոխանցվի ***Արովյանի ՏԳԲ 900105205067*** հաշվեհամարին: Հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով ստանալ հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Կոտայքի մարզ, Արամուս գյուղի Կենտրոնական փողոցի թիվ 17 հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրը ժամը 12^{00}-ն, և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Արամուսի գյուղապետարան

Հաստատված է
N ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով
Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի
2014թ. Մարտի 24-ի թիվ 1 որոշմամբ

ԱՐԱՄՈՒՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հ Ր Ա Վ Ե Ր

Արամուս համայնքի Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասրահների ձեռք բերման համար հայտարարված պարզեցված ընթացակարգի մրցույթի

Հարգելի մասնակից,

Նախքան պարզեցված ընթացակարգի հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող պարզեցված ընթացակարգի հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արամուս համայնքի ***Տիգրանաձորի և Ազատամարտիկների խաչուղիներում սպասասրահների ձեռք բերման*** համար հայտարարված պարզեցված ընթացակարգի մրցույթի հրավերի

ՄԱՍ Ի.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Մրցույթի հրավերի պարզաբանումը և մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Մրցույթի հայտը ներկայացնելու կարգը
5. Մրցույթի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Մրցույթի հայտի ապահովումը
7. Մրցույթի հայտերի բացումը
8. Մրցույթի հայտերի գնահատումը, համեմատումը և մրցույթի արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի ապահովումը
10. Պայմանագրի կնքումը
11. Մրցույթը չկայացած հայտարարելը
12. Մասնակիցների հետ բանակցություններ վարելու անթույլատրելիությունը, տնտեսական մրցակցության սահմանափակման դեպքերը բացահայտելը և կանխարգելելը.
13. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II.
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ.
2. Պարզեցված ընթացակարգի հայտը.
3. Մասնակցի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.
4. Պարզեցված ընթացակարգի հայտի գնային առաջարկը.
5. Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու կարգը.
6. Հավելվածներ:

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն Արամուսի գյուղապետարանի կողմից (այսուհետև՝ Պատվիրատու) , Արամուս համայնքի *Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասրահների ձեռք բերման* համար հայտարարված պարզեցված ընթացակարգի մրցույթի հրավերի ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով* պարզեցված ընթացակարգի (այսուհետև՝ պարզեցված ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված համապատասխան կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված պարզեցված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու պարզեցված ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, պարզեցված ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. սույն հրավերի 4.1.1 կետով սահմանված դեպքերի:

Սույն պարզեցված ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պարզեցված ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՄԱՍ I

1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում Արամուս համայնքի *Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասրահների ձեռք բերումը:*

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Գնման առարկան բաղկացած է 1(մեկ) չափաբաժնից:

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը
1	*Սպասասրահների ձեռք բերում*

2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Մրցույթին մասնակցելու համար մրցույթի գործընթացի ցանկացած փուլում Մասնակիցը պետք է բավարարի սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

2.2 Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Մասնակիցը.

1) պետք է ունենա գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

2) չպետք է դատական կարգով լինի անվճարունակ ճանաչված, չպետք է գտնվի լուծարման գործընթացում, չպետք է արգելանքի տակ ունենա պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

3) չպետք է մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ունենա ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

4) կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝

1) դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Սույն կետի 1) ենթակետում նշված որակավորման չափանիշները կգնահատվեն ստորև բերված կարգով.

N	Գնահատվող չափանիշի անվանումը	Գնահատվող չափանիշի պահանջվող չափը	Գնահատականը**
1	2	3	4
1.	Նախորդ ժամանակահատվածում կատարած նմանատիպ աշխատանքների ընդհանուր ծավալը՝ A	A < 3,0 մլն A . 3,0 մլն	Չի համապատասխանում Համապատասխանում է
2.	Ֆինանսական միջոցների առկայությունը՝ F	F < 0.70 մլն F . 0.70 մլն	Չի համապատասխանում Համապատասխանում է
3.	Ինժեներատեխնիկական անձնակազմի միջին մասնագիտական ստաժը՝ L**	L < 3 տարի L . 3 տարի	Չի համապատասխանում Համապատասխանում է

Յուրաքանչյուր տեխնիկական միջոցի առաջարկվող քանակը պետք է առնվազն հավասար լինի սույն հրավերով պահանջվող քանակին (ներկայացված է սույն հրավերի Մաս II-ում):

** L=(. ai) /n, որտեղ ai -ն I-րդ աշխատողի մասնագիտական ստաժն է, իսկ n-ը՝ աշխատողների թիվը: Եթե ai . 10, ապա ընդունվում է՝ ai =10:

***Չափանիշներից որևէ մեկին չբավարարելու (տողերից որևէ մեկում Չի համապատասխանում գնահատական ստանալու) դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. Մրցույթի հրավերի պարզաբանումը և մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր ձևով: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

3.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին, պարզաբանումը տրամադրելու օրը գրավոր ծանուցվում են հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցները, առանց նշելու պարզաբանում պահանջած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի I մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ կարող են մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու ձևով փոփոխվել գնման առարկայի բնութագրերը: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում: Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվում է այդ փոփոխությունների մասին մամուլում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած մրցույթի հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել մրցույթի հայտի նոր ապահովում:

3.5 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

3.6 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն հրավերին համապատասխան կազմակերպված մրցույթի անցկացումից ցանկացած ժամանակ՝ մրցույթի հայտարարության հրապարակման պահից մինչև մրցույթի հանձնաժողովի կողմից հաղթող ընտրելու մասին որոշման կայացումը:

4. Մրցույթի հայտը ներկայացնելու կարգը

4.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում պարզեցված ընթացակարգի հայտ: Մասնակիցը չի կարող նույն պարզեցված ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Պարզեցված ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Պարզեցված ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Պարզեցված ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ <<Պարզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու>> հրահանգում:

4.1.1 Մասնակիցները կարող են պարզեցված ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր,

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները,

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

4.2 Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան պարզեցված ընթացակարգի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 12^{00}-ն, գ. ***Արամուս Կենտրոնական փողոց 17 հասցեում:*** Պարզեցված ընթացակարգի հայտերը ստանում և պարզեցված ընթացակարգի հայտերը գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար ***Զ.Վարդանյանը:*** Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք:

4.3 Մասնակիցները պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում,

2) որակավորման հատկանիշների մասին հայտարարություն՝ մեկ բնօրինակ և մեկ պատճե,

3) գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ,

4) հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ:

4.4 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված պարզեցված ընթացակարգի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

5. *Մրցույթի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը*

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից պարզեցված ընթացակարգի հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտում փոփոխությունների մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու>> հրահանգի 4.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. Մրցույթի հայտի ապահովումը

6.1 Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը, պարզեցված ընթացակարգի հայտով, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պարզեցված ընթացակարգի հայտի ապահովում: Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովման չափը չի կարող պակաս լինել պարզեցված ընթացակարգի հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

6.2 Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 4 հավելվածով:

6.3 Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից,

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

3) հայտերի բացումից հետո հրաժարվել՝ գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

7. <u>Մրցույթի հայտերի բացումը</u>

7.1 Պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը կկատարվի պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ պարզեցված ընթացակարգի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 12^{00}-ին, գ. ***Արամուս Կենտրոնական փողոց 17 հասցեում:***

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

7.3 Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած Մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած Մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

7.4 Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ եթե գնահատող հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն հրավերի 7.3 կետում նշված արձանագրությանը:

7.5 Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում: Պատվիրատուն պարտավոր է ապահովել Մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում դրանց հրապարակման հետևանքով Մասնակիցներին պատճառված վնասի համար, բացառությամբ սույն օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների:

7.6 Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն՝ հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրան բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Եթե տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա հայտնում է ինքնաբացարկ՝ բացառելով իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին, իսկ տվյալ ընթացակարգում նրան փոխարինում է հանձնաժողովի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

7.7 Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն Մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

7.8 Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.9 Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն Մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ, որոնք հնարավոր է չափել դրամական արտահայտությամբ: Ոչ

գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

7.10 Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

7.11 Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած Մասնակիցներին որոշելուց հետո՝ յոթն աշխատանքային օրվա ընթացքում՝

1) առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն կետի 1-ին ենթակետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ Մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

7.12 Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.11 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում Մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7.13 Օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն՝ սույն հրավերի 7.12 կետի համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած Մասնակցին:

7.14 Օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8. Մրցույթի հայտերի գնահատումը, համեմատումը և մրցույթի արդյունքների ամփոփումը

8.1 Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են և մերժված հայտի պատճենը վերադարձվում է մասնակցին նիստին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

8.2 Կարգի 77-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի անդամը ստացված փաստաթղթերի հիման վրա գնահատում է յուրաքանչյուր մասնակցի՝

1) գնումներին մասնակցելու իրավունքը և հայտով ներկայացված որակավորման հատկանիշների համապատասխանությունը հրավերի պահանջներին,

2) ներկայացրած ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը:

8.3 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ 8.2. կետի 1) ենթակետով նախատեսված տվյալներին տրվում են հրավերով նախատեսված պահանջներին <<Համապատասխանում է>> կամ <<Չի համապատասխանում>> գնահատականները: <<Համապատասխանում է>> գնահատականը տրվում է, եթե հայտով մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են հրավերով այդ տվյալների համար սահմանված նվազագույն պահանջներին:

8.4 8.2-րդ կետի 2) ենթակետով նախատեսված գնահատումը իրականացվում է հայտով ներկայացված գնային առաջարկի՝ թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման (թվաբանական) ճշտությունը գնահատելու միջոցով: Թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում տառերով

արտահայտված տվյալները: Թվաբանական անճշտությունների դեպքում, հիմք ընդունելով չափի միավորի ցուցանիշները, կատարվում է վերահաշվարկ:
8.5 Քարտուղարը մասնակցի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությանը վերաբերող փաստաթղթերը և ստացած գնահատման թերթիկները փոխանցում է նախագահին, որը հայտարարում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից մասնակիցներին տրված գնահատականները,
սույն կետով նախատեսված գնահատման արդյունքում՝

1) անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում նիստը համարվում է կասեցված, և

նիստի բացման հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը ներկայացրած մասնակցին գրավոր ծանուցվում է անհամապատասխանության մասին՝ վերջինիս հնարավորություն տալով ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով ուղղել անհամապատասխանությունը: Սույն մասով նախատեսված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հանձնաժողովը մերժում է հայտը: Մերժված հայտի պատճենը վերադարձվում է մասնակցին՝ նիստին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:
2) անհամապատասխանություն չհայտնաբերելու դեպքում քարտուղարը փաստաթղթերի բնօրինակներն առանձնացնում և գույքագրում է, որից հետո փաստաթղթերի պատճենները, ներառյալ գնային առաջարկի և ինքարժեքի հաշվարկները, տրամադրում է հանձնաժողովի նախագահին, ինչի մասին արձանագրության մեջ կատարվում է գրառում:
8.6 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
8.7 Եթե մասնակցի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին (կարգին), ապա այդ Մասնակցի հայտը մերժվում է և համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:
Մասնակցի հայտը մերժվում է, եթե՝
1) Մասնակիցը չի համապատասխանում հրավերով սահմանված որակավորման չափանիշներին.
2) Մասնակիցը չի համաձայնում վերը նշված՝ տառերով գրված գումարը հիմք ընդունելու պահանջին.
3) Օրենքով և սույն հրավերով նախատեսված այլ դեպքերում:

8.8 Եթե հանձնաժողովը որոշում չի կայացնում ընտրված մասնակցից իր որակավորման հատկանիշների վերահաստատման պահանջ ներկայացնելու մասին, ապա ընտրված մասնակցին
որոշելու նպատակով հրավիրվող նիստը միաժամանակ հանդիսանում է պարզեցված ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստ:
Պայմանագիր կնքելու, իսկ պարզեցված ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են պարզեցված ընթացակարգի արդյունքները: Ընտրված մասնակցի որակավորման

հատկանիշները համարվում են վերահաստատված, եթե նա հանձնաժողովին ներկայացնում է դրա մասին գրավոր հայտարարություն:
8.9 Բովանդակային պահանջներ են համարվում հրավերով սահմանված՝ մասնակցից պահանջվող տեղեկություններին (փաստաթղթերին) ներկայացվող վավերապայմանների պահպանումը: Ընդ որում օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝
1) <<մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելիս, եթե ներկայացված պայմանագրերում և դրանց կատարումը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, հիմք է ընդունվում կատարումը հիմնավորող փաստաթղթերում ներառված տեղեկատվությունը.
2) <<աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը գնահատելիս, եթե ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, հիմք է ընդունվում մասնակցի կողմից իր մոտ աշխատած ժամանակահատվածում տվյալ աշխատակցի գծով որպես գործատու
կատարված սոցիալական ապահովագրության պարտադիր վճարների կատարումը հիմնավորող փաստաթղթում նշված տեղեկատվությունը:
8.10 Այն դեպքում, երբ պարզեցված ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում՝ պայմանավորված այնպիսի հանգամանքներով<<որոնց համար կողմերը պատասխանատվություն չեն կրում>>, ապա նշված կողմերի միջև իրավահարաբերությունը դադարում է:

9. <u>Պայմանագրի ապահովումը</u>

9.1 Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված Մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

9.2 Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ապահովման չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի հինգ տոկոսից և չի կարող գերազանցել պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

9.3 Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված Մասնակիցը նախապես Պատվիրատուին ներկայացնում է կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով:

9.4 Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում:

10. Պայմանագրի կնքումը

10.1 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից:

10.2 Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրված Մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

10.3 Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ

պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

10.4 Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հրահանգի 10.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, Կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված Մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

11. Մրցույթը չկայացած հայտարարելը

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2 Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3 Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն լիազոր մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. <u>Մասնակիցների հետ բանակցություններ վարելու անթույլատրելիությունը, տնտեսական մրցակցության սահմանափակման դեպքերը բացահայտելը և կանխարգելելը</u>

12.1 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ պարզեցված ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) օրենքով նախատեսված այլ դեպքերի:

12.2 Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է՝ Մասնակցի գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակիցը ներառվում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված ցուցակում:

13. <u>Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու Մասնակցի իրավունքը և կարգը</u>

13.1 Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

13.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

ա) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները՝ գնումների բողոքարկման խորհրդին.

բ) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

13.3 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

13.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը.

7) այլ անհրաժեշտ տեղեկությունները:

13.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

13.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքով սահմանված պահանջներին, ապա Գնումների

աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետում:

13.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

13.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումը իրավապարտադիր է:

13.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:

2) Դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3) Չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու.

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ Մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահարգիռ Մասնակցի հնարավորությունների վրա:

4) Եթե Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառվում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույն 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում:

5) Բոլոր այն դեպքերում, երբ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառվում է Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի ա) ենթակետով նախատեսված պատժամիջոցը:

6) Հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

7) Որոշում կայացնելու Մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող Մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

13.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

13.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

13.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք:

Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգերին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

13.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

ՄԱՍ II
ՀՐԱՀԱՆԳ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Պարզեցված ընթացակարգի հայտերը (ներառյալ բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինեն հայերեն:

2. Պարզեցված ընթացակարգի հայտը

2.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել պարզեցված ընթացակարգի հայտ: Պարզեցված ընթացակարգի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով պարզեցված ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է պարզեցված ընթացակարգին մասնակցելու դիմումով (Հավելված N 1):

2.2 Մասնակիցները պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում են.

ա) Պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանության մասին հայտարարություն այն մասին, որ ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտարարություն այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ չի ճանաչվել.

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված է կամ մարված է.

4) ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ինչպես նաև հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 Հավելվածում:

2.3 Գնային առաջարկը՝N 3 Հավելված (ծավալաթերթ նախահաշիվ՝ N 3.1 Հավելված, գնացուցակ՝ N 3.2 Հավելված,):

2.4 Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովում՝ N 4 Հավելված:

3. Որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը

3.1 Գնումներին մասնակցելու՝ հրավերի I մասի 2-րդ կետով նախատեսված՝ որակավորման իր չափանիշները հավաստելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում գրություն՝N 5 Հավելված, որին կցվում են.

ա) Պետական գրանցման վկայականի (ներառյալ բոլոր ներդիրների) պատճեի նոտարական կարգով վավերացված օրինակը (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է).

բ) Տեղեկանք Մասնակցի կողմից նախորդ ժամանակահատվածում ամբողջությամբ պատշաճ կատարված նմանատիպ աշխատանքների մասին՝ N 5.1 Հավելված: Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել՝

- նմանատիպ աշխատանքների պայմանագրի՝ ներառյալ բոլոր անբաժանելի մասը կազմող հավելվածների և փոփոխությունների առկայության դեպքում, համապատասխան փոփոխությունների վերաբերյալ կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) կամ պայմանագրով նախատեսված այլ փաստաթղթերի պատճեները (նախագծերը կարող են չկցվել).

- պայմանագրի ամբողջ ծավալով պատշաճ կատարված աշխատանքների կատարողական ակտերը, հանձնման – ընդունման արձանագրությունների պատճեները կամ պայմանագրի մյուս կողմի գրավոր հավաստումը (նշելով աշխատանքների ընդհանուր ծավալը) աշխատանքների պատշաճ կատարման մասին (բնօրինակը)՝ կնքված (եթե հավաստողը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է) և ստորագրված հավաստողի կողմից.

գ) 2013 թվականի ֆինանսական հաշվետվությունների պատճեները հարկային տարածքային մարմին ներկայացրած ֆինանսական հաշվետվություններին համապատասխանության մասին տվյալ Մասնակցին հաշվառող հարկային տարածքային մարմնի կողմից կատարված գրառումով, ստորագրված և կնքված հարկային պետական ծառայության կլոր կնիքով (բացառությամբ ընթացիկ տարում ստեղծված, ինչպես նաև այն կազմակերպությունների, որոնց համար ֆինանսական հաշվետվությունների նշված ձևերի ներկայացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պարտադիր չէ), իսկ պարզեցված հարկ վճարող Մասնակիցները ներկայացնում են օրենսդրությամբ սահմանված պարզեցված հարկի հաշվարկները՝ սույն ենթակետի պահանջների պահպանմամբ (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է).

դ) Տեղեկանք Մասնակցին վարկային գծի տրամադրման մասին բանկի հետ կնքված պայմանագիր կամ բանկային երաշխիք՝ N 5.2 Հավելված.

ե) Տեղեկանք պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների մասին՝ N 5.3 Հավելված: Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել ներկայացված աշխատողների աշխատանքային գրքույկների, նրանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների դիպլոմների պատճեները.

զ) Տեղեկանք Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտից՝ Մասնակցի անվճարունակ ճանաչված չլինելու մասին (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է).

է) Մասնակցին հաշվառող՝ համապատասխան հարկային տարածքային մարմինների կողմից հաստատված (կլոր կնիքով կնքված) տեղեկանք Մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության հարկային և սոցիալական ապահովագրության վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու մասին (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է).

.

3.2 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

3.4 Եթե Մասնակիցը միևնույն օրը տարբեր ընթացակարգերին մասնակցելու համար ներկայացնում է հայտեր, որից միայն մեկ հայտում է ներառում հրավերներով պահանջվող նույն փաստաթղթի բնօրինակը (ընդ որում տվյալ հայտը ժամանակագրական առումով բացվում է առաջինը), իսկ մյուս հայտերում՝ պատճե՝ նշելով իր կողմից ներկայացված այն հայտը, որում ներառված է բնօրինակը, և դա առկա է նշված

հայտում, ապա այդ հայտը գնահատող հանձնաժողովի կողմից կարող է գնահատվել որպես հրավերի պահանջներին բավարարող:

3.5 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք կնքվում (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքում) և ստորագրվում են Մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են կնքված (իրավաբանական անձի կամ անհատ

ձեռնարկատերի դեպքում) և ստորագրված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է կնքված և ստորագրված լինեն բնօրինակից:

3.6 Եթե գնման պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ կոնսորցիումի միջոցով, ապա Մասնակիցը պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում է նաև պայմանագրի կողմ հանդիսացող անձի պետական գրանցման վկայականի (անձնագրի) պատճենները, իսկ առաջին տեղն զբաղեցրած ճանաչվելու դեպքում՝ նաև սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ընդ որում, կոնսորցիումի առկայության դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները,

գ. Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Եթե գործակալության կամ կոնսորցիումի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

4. Պարզեցված ընթացակարգի հայտի գնային առաջարկը

4.1 Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, շահույթը:

4.2 Հայտի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

4.3 Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի N 3 Հավելված-ով նախատեսված տեսքով, որին կցվում է առաջարկվող գնի ինքնարժեքի հաշվարկը՝ Մասնակցի կողմից կազմված **գնացուցակը**, որի լրացման օրինակելի ձևը կցվում է (N 3.1 Հավելված), ընդ որում՝ գնացուցակի բոլոր էջերը պետք է ստորագրված լինեն Մասնակցի կողմից: Ցանկալի է հայտում ներառել գնացուցակի էլեկտրոնային տարբերակը՝ կազմված համակարգչային (EXCEL) ծրագրով էլեկտրոնային կրիչով:

4.4 Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած Մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

5. Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու կարգը

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով: Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե այն կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ օրինակ պատճեից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճե>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

3) <<Չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

4) Մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Հավելված 1
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
Պարզեցված ընթացակարգի հրավերի
N ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ

_____ հայտնում է, որ ցանկություն
(Մասնակցի անունը (անվանումը))
ունի մասնակցելու Արամուսի գյուղապետարանի կողմից **ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3** ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
N ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
Պարզեցված ընթացակարգի հրավերի
N ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԿՑԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

----------հայտարարում է, որ.
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

1) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.
3) մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

----------ն կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)
ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1) դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
2) գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
3) իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

_____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) _____ (ստորագրությունը)

Կ.Տ

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված N 3

ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

ՈՒսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը _____ առաջարկում է
(Մասնակցի անունը (անվանումը))
ապրանքի ձեռք բերումը կատարել _____, _____ ՀՀ դրամով,
(թվերով) (տառերով)
ընդ որում՝

Հազար դրամ

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Գնի առաջարկը		Գինը առանց ԱԱՀ-ն	
		թվերով	տառերով	թվերով	տառերով
1	*2*	*3*	*4*	*5*	*6*

Կից ներկայացնում ենք առաջարկվող գնի հաշվարկը՝ _____ - ի կողմից կազմված գնացուցակը:
(Մասնակցի անունը (անվանումը))

_____ _____
(Մասնակցի անունը (անվանումը), ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<___>>_____ 2014թ.

Հավելված N 3.1

ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ԳՆԱՑՈՒՑԱԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Հազար դրամ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1			C 1	A 1	B 1
2			C 2	A 2	B 2
3			C 3	A 3	B 3
4			C 4	A 4	B 4
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-
n	-	-	Cn	An	Bn
Ընդամենը					**∑Bi**
Շահույթ %					
Ընդամենը					
ԱԱՀ 20%					
Ընդհանուրը					

_____ _____
(Մասնակցի անունը (անվանումը), ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<___>>_____ 2014թ.

Մասնակցի կազմած գնացուցակում յուրաքանչյուր ապրանքի միավորի գնի մեջ պետք է ներառվի բոլոր ծախսերը, բացի շահույթից և ԱԱՀ-ից:

**** Ծանոթություն-Խստագույն պահպանել՝*** **C1xA1=B1**
C2xA2=B2
. . . . . .
CnxAn=Bn

B1+B2+B3+B4+. . . . .+Bn=∑Bi և մյուս թվաբանական գործողությունների ճշտությունը.

Հավելված N 3.2

ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ՈՉ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

ՈՒսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը _____ առաջարկում է
(Մասնակցի անունը (անվանումը))
պայմանագիրը կատարել.
ա) կամ նախագծով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան.
բ) կամ նոր՝ կից ներկայացվող տեխնիկական առաջարկներին համապատասխան:

*** Ծանոթություն 1՝ Նոր առաջարկները կցվում են.**
*** Ծանոթություն 2՝ Նշել ընտրվող տարբերակը(ները).**

_____ _____
(Մասնակցի անունը (անվանումը), ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<___>>_____ 2014թ.

Հավելված N 4

ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3

ք._____ <<___>>_____ 2014թ.

_____, ի դեմս Ընկերության
(Մասնակցի անունը (անվանումը))
տնօրեն _____ -ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է Արամուսի գյուղապետարանի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից ***Արամուս համայնքի Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասրահների ձեռք բերման*** նպատակով կազմակերպված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգին, պետք է ներկայացնի հայտի ապահովում և պարզեցված ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝_____ _____
(թվերով) (տառերով)
ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց պահանջ ներկայացվելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող _____
(բանկի անվանումը)
բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած այլ հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է _____ բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող
(բանկի անվանումը)
բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև

_____

(նշվում է ժամկետը)

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն համաձայնությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

_____

(Ընկերության անվանումը, հասցեն)

_____

(Ընկերությանը սպասարկող բանկը, Հ/Հ)

_____

(ՀՎՀՀ)

_____

(Տնօրենի ԱԱՀ, ստորագրությունը)

_____

(Գլխավոր հաշվապահի ԱԱՀ, ստորագրությունը)

Կ.Տ

Հավելված N 5

ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ԱՐԱՄՈՒՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Կից ներկայացնում ենք ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

_____ _____
(Մասնակցի անունը (անվանումը), ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<____>>_____ 2014թ.

Հավելված N 5.1
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ՏԵՂԵԿԱՆՔ

ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆՄԱՆԱՏԻՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով տեղեկացնում եմ, որ _____
(Մասնակցի անունը (անվանումը))
կողմից 20 թվականի հունվարի 1-ից մինչև հայտը ներկայացնելու պահը կատարվել են _____ ,
(աշխատանքների անվանումները)
որոնց ընդհանուր արժեքը կազմել է _____
(թվերով և տառերով)
ՀՀ դրամ: Ընդ որում,

Նախկինում կատարված պայմանագրերի			
Առարկան	Ծավալը	Գումարը (դրամ)	Պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	*2*	*3*	*4*
Տարեթիվը՝ _____ թվական			
1.			
2.			

Կից ներկայացնում ենք _____ :

** (նշված նմանատիպ աշխատանքների պայմանագրի՝ ներառյալ բոլոր անբաժանելի մասը կազմող հավելվածների և փոփոխությունների առկայության դեպքում, համապատասխան փոփոխությունների վերաբերյալ կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) կամ պայմանագրով նախատեսված այլ փաստաթղթերի պատճենները (նախագծերը կարող են չկցվել), պայմանագրի ամբողջ ծավալով պատշաճ կատարված աշխատանքների կատարողական ակտերի պատճենները (եթե պայմանագրով այդպիսին նախատեսված է) կամ պայմանագրի ամբողջ ծավալով պատշաճ կատարված աշխատանքների հանձնման – ընդունման արձանագրությունների պատճենները՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից կամ պայմանագրի մյուս կողմի գրավոր հավաստումը (նշելով աշխատանքների ընդհանուր քանակը) աշխատանքների պատշաճ կատարման մասին (բնօրինակը) կնքված (եթե հավաստողը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է) և ստորագրված հավաստողի կողմից)*

_____ _____
(Մասնակցի անունը (անվանումը), ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<___>>_____ 2014թ.

Հավելված N 5.2
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

ք._____ <<___>>_____ 2014թ.

Ընդունելով ի գիտություն, որ _____
(Պատվիրատուի անունը (անվանումը))
(այսուհետև՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար _____
(Մասնակցի անունը (անվանումը))
(այսուհետև՝ Պրինցիպալ) պարտավոր է ներկայացնել բանկային երաշխիք
_____ _____
(թվերով) (տառերով)
ՀՀ դրամի չափով (այսուհետև՝ երաշխիքային գումար),
_____
(բանկի անվանումը)
(այսուհետև՝ Երաշխավոր) ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (ժառանգների) Երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (ժառանգների) հետ համապարտ պարտապան, ի ապահովումն նշված պարզեցված ընթացակարգին մասնակցելուց բխող Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից նշված պարզեցված ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պարզեցված ընթացակարգի արդյունքներով պայմանագրի կնքումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Երաշխավորը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահանջված գումարը, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարին, առանց Երաշխավորին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերին, սույն երաշխիքի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է
_____
(նշվում է հրավերի 8.4 կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետը)

Բանկի կառավարիչ՝ _____

Կ.Տ

Գլխավոր հաշվապահ՝ _____

Հավելված N 6
ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՍՊԱՍԱՐԱՀՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3

գյուղ Արամուս <<___>>_____ 2014թ.

Արամուսի գյուղապետարանը, ի դեմս գյուղապետ Հրայր Նիկողոսյանի, որը գործում է գյուղապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ "Գնորդ", մի կողմից, և <<_____>> -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ "Վաճառող" մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 3) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ***Արամուս համայնքի Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասրահների ձեռք բերման*** /այսուհետ՝ Աշխատանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Աշխատանք և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Աշխատանք մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից, եթե կատարման ժամկետները խախտվել են10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք.

ա) պահանջել հատուցելու Աշխատանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Աշխատանքն ՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը Պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Աշխատանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Աշխատանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Աշխատանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Աշխատանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Աշխատանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Աշխատանքը և հրաժարվել մնացած Աշխատանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Աշխատանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Աշխատանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Աշխատանք.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Աշխատանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Աշխատանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Աշխատանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Ձնել Աշխատանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Աշխատանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Կատարողի հանձնած Աշխատանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Աշխատանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Աշխատանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Աշխատանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Աշխատանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կատարված Աշխատանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողն Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Աշխատանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Աշխատանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Աշխատանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ կատարել Աշխատանքը:

3.4 Կատարողն պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Աշխատանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Աշխատանքը Գնորդին /Ստացողին/ հանձնել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Աշխատանքի կատարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Աշխատանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Աձխատանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Աշխատանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի աշխատանք թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի կատարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Աշխատանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Աշխատանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Աշխատանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Աշխատանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Աշխատանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Աշխատանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ժամկետում:

5. Աշխատանքի որակը

Կատարողը երաշխավորում է մատակարարված Աշխատանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Աշխատանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը՝ Աշխատանքի հանձման ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4) և Աշխատանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Աշխատանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

Աշխատանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած Աշխատանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ կատարման ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանքի կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են կատարվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է ……էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
<<_____>>_____ 2014թ.
կնքված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաքաղվածքի համարը	Անվանումը	Չափի միավոր	Քանակը
1	*Տիգրանաձորի և Ազատամարտիկների խաչուղիներում (x=1.2մ, y=3.0մ, h=2.4մ) չափերով,պոլուկարբոնատյա կողերով,ցինկե թիթեղյա ծածկույթով սպասասրահների պատրաստում և տեղադրում*	հատ	5

<<Պատվիրատու>>

_____
(ստորագրությունը)

Կ.Տ

<<Կատարող>>

_____
(ստորագրությունը)

Կ.Տ

Հավելված N 2
<<____>>_____ 2014թ.
կնքված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների անվանումը	Ծավալը (հազար դրամ)	Ապրանքների ձեռք բերման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1.	***Արամուս համայնքի Տիգրանաձորի և Ազատամարտիկների խճուղիներում սպասասրահների ձեռք բերում***			

<<Պատվիրատու>>

_____
(ստորագրությունը)

Կ.Տ

<<Կատարող>>

_____
(ստորագրությունը)

Կ.Տ

Հավելված N 3
<<____>>_____ 2014թ.
կնքված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի անվանումը	Ֆինանսավորման ժամկետը			
	Ֆինանսավորումը կատարվելու է 2014 թվականի համայնքի բյուջեից, երկկողմ հանձնման – ընդունման արձանագրության հիման վրա			
	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
Արամուս համայնքի Տիգրանաձորի և Ազատամարտիկների խաչուղիներում սպասասրահների ձեռք բերում	**0.0**	**100 %**	**100 %**	**100 %**

<<Պատվիրատու>> **<<Կատարող>>**

_____ _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

Կ.Տ Կ.Տ

Հավելված N 4
<<_____>>_____ 2014թ.
կնքված ՀՀ ԿՄԱԳ-ՊԸԱՇՁԲ-14/3 *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի գնման պայմանագրի

<<Գնորդ >>
_____
_____
_____

<<Վաճառող>>
_____
_____
_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____

<<_____>>_____ 2014թ.

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

"__" "_____" 201 թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ "__ " "_____" 201 թ.
Պայմանագրի համարը՝ _
Գնորդն, ի դեմս գյուղապետ_____ և Վաճառողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ "___" "_____" 201 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի /պատասխանատու ստորաբաժանման/ N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները /այսուհետև՝ Մատակարարում/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը "__" "_____" 201 թ–ից "__" "_____" 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-ռումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքն հանձնեց

_____
/ստորագրություն/

ազգանուն
և Ս

Աշխատանքն ընդունեց

_____
/ստորագրություն/

ազգանուն